

ՀՈՎԱՍԱՓ ՍԵՐԱՍՏԱՑՈՒ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԸ

ԴՌՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

XVI դ. առաջին կեսի բանաստեղծ, նկարիչ, պատմագիր ու ժամանակագիր Հովասափ Սեբաստացու գործունեությունը դեռ անցյալ դարի 60-ական թվականներից գտնվել է հայ բանասիրության քննության շրջանակներում: Սկսած 1865 թ. նրա բազմաբնույթ մատենագիտական ժառանգությանն անդրադարձել են հայագետներ Ղ. Փիրղալեմյանը¹, Գ. Հովսեփյանը², Ն. Մառը³, Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը⁴, Ա. Չոպանյանը⁵, Յ. Մուրատը⁶, Յ. Մակլերը⁷ և ուրիշներ, որոնք, ըստ արժանվույն գնահատելով Հ. Սեբաստացու նկարչական և բանաստեղծական բեղմնավոր գործունեությունը, գիտական շրջանառության մեջ են դրել նրա ստեղծագործությունները: Հեղինակի բանաստեղծական ժառանգությունը ուսումնասիրվել է նաև մեր օրերում. բանասիրական հանդամանալի քննության արդյունք են վ. Գևորգյանի⁸ և Հ. Սիմոնյանի⁹ մեկնադրությունները:

Այսուհանդերձ, ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել Հ. Սեբաստացու ժառանգության մի կարևոր բնագավառը՝ նրա բնագիտական գործունեությունը: Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը իր «Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ.» ուսումնասիրության մեջ առաջին անգամ վկայակոչում է Հ. Սեբաստացու հեղինակած «Թշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական աշխատությունը և այն բնութագրում որպես միջնադարյան բնագիտության արժեքավոր գործ¹⁰: Այսօր հայտնի են հիշյալ աշխատության երկու ձեռագիր ընդօրինակություն՝ հեղինակային հիշատակարաններով: Դրան-

1 Ղ. Փիրղալեմյանի 1865 թ. հայտնած տեղեկությունը հայր և որդի սեբաստացիների ընդօրինակած մի շատ արժեքավոր ինքնագիր «Յայսմաուրբի» վերաբերյալ փաստորեն Հ. Սեբաստացու գրչական գործունեության մասին առաջին վկայությունն է (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 6273, էջ 236բ—237ա):

2 Գ. Հովսեփյան, Հովասափ Սեբաստացի («Արարատ», 1918, էջ 226—250):

3 Н. М а р р, Из легкой поездки в Армению, СПб., 1892, с. 11—12.

4 Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 373:

5 Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 32, նաև А. Tchobanian, La Roseate d'Armenie, II—III, Paris, 1923, p. 137—149, 139—149:

6 Յ. Մուրատ, Նշանագրք իմաստնոյ («Հանդես ամօրյա», Վիեննա, 1903, էջ 5—9, 144—146, 333—335):

7 F. Macler, Notices de manuscrits Armenie, Paris, 1913, p. 109—118:

8 Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ վ. Գևորգյանի, Երևան, 1964:

9 Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975:

10 Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ. («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 23—43):

ցից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7749 ձեռագիր-բժշկարանն է¹¹, իսկ մյուսը՝ Զմմառի վանքի մատենադարանի № 212 ձեռագիրը¹²:

2. Սեբաստացու հեղինակած բժշկարանի քննությունից պարզվեց, որ ի դեմս նրա հայ բժշկագիտությունն ունի բավական ինքնատիպ մի բնագետ «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» գործը փոքրածավալ, բայց յուրօրինակ ու արժեքավոր մի ստեղծագործություն է, որի առաջաբանն իսկ պատկերացում է տալիս դրանում քննված բնագիտական խնդիրների մասին:

Բժշկարանը բաղկացած է չորս բաժնից, որին հետևում է հիշատակարանը. «Աւրհնեալ է բարերար և ողորմածն Աստուած յորժամ ըստեղծ զմարդն առաջին, քանի որ ի դրախտին եկաց, ոչ ցաւ ի մարմնի կայր և ոչ հիւանդութիւն ի հոգի, յորժամ անցաւ զպատուերն, ապա ամէն ցաւ և ճիւղեղութիւն տիրացաւ տարերց հակառակութեամբն, զի ի մէջ տարերց եմուտ աշխարհս: ...Բայց մեք անպիտան ծառայս ձեր մեղայապարտ Յովասափ անուն սարկաւազ Սեբաստացի կամեցայ զընտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստասիրական և բժշկական զամենայն ցեղ ցաւոց ըստածումն, զեփեփն, դտորրեփն զամենայն դեղոց և խնամածել ցաւածին»¹³:

Համեմատական քննությունը ցույց տվեց, որ այս երկի աղբյուրներն են եղել Ամիրզովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» ծավալուն երկասիրությունն առաջին՝ «Ուսումն բժշկութեան», բաժինը, նույն հեղինակի «Անգիտաց անպէտ» ընդարձակ դեղաբառարանի առաջաբանը, միջնադարյան տարբեր բնույթի ձեռագիր ժողովածուներում հանդիպող «Ի չորից գոյացեալ ասի մարդ, զի չորք պատճառք են եղելութեան» բնաբանով անհեղինակ գործը (որը նվիրված է չորս տարրերի ուսմունքին) և XIV դ. հայ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցման» աշխատության «Յաղագս լինելութեան մարդոյն» տիեզերագիտական-բնագիտական հարցերին առնչվող բաժինը: Բժշկարանի այսօրինակ համահավաք բնույթն, անշուշտ, չի արժեքազրկում այն, քանի որ հեղինակը, նախ՝ նշված աղբյուրները օգտագործել է ստեղծագործաբար, ի մի բերելով բնագիտական նյութերը, սխտեմավորված հետևողականությամբ շարադրել տվյալ բնագիտական-բժշկական խնդիրների մասին իր (թող որ ազդեցություն կրած) տեսակետը: Այս դեպքում, թերևս, խոսք կարող է լինել լոկ ազդվածություն և ոչ փոխառություն մասին: Եվ երկրորդ այդ աշխատությունը չափազանց արժեքավոր է իր կիրառական նշանակությամբ: Փաստորեն 2. Սեբաստացին այս գործով ժամանակի բժիշկներին հաղորդել է որոշակի բնագիտական գիտելիքներ, որոնք, անշուշտ, օժանդակել են միջնադարյան հայ բժշկագիտական մտքի զարգացմանը:

Խնդրո առարկա բժշկարանում շոշափվում են բնախոսական, կազմախոսական և դեղագիտական հարցեր:

2. Սեբաստացու բնագիտական հայացքների հիմքում ընկած է միջնադարում գերիշխող չորս տարրերի վերաբերյալ ուսմունքը: Հույն բժիշկ-փիլի-

¹¹ Նույն տեղում, էջ 32:

¹² Ն. Ա կ ի ն յ ա ն, 2. Ո ս կ յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Կ. Բ. Վիեննա, 1971, էջ 209:

¹³ Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 88բ (այս և հետագա ընդգծումները մերն են—Դ. Կ.):

սոփա էմպեդոկլեսի՝ (մ. թ. ա. V դ.) իր ժամանակի համար առաջադեմ բնափիլիսոփայական այդ ուսմունքը հարատևեց գրեթե ամբողջ միջնադարում¹⁴, Հայ միջնադարյան մտածողները, ամենատարբեր առիթներով, բնագիտական-բնափիլիսոփայական, ֆիզիոլոգիական բնույթի իրենց աշխատություններում դիմել են չորս տարրերի ուսմունքին, որը, բեկվելով նրանց ինքնատիպ բնափիլիսոփայական ընկալումներում, ստացավ զարմանալի յուրօրինակ արտահայտություն:

Միջնադարյան հայ բնափիլիսոփայական մտքի ֆոնի վրա Հովասափ Սեբաստացու բնափիլիսոփայական ըմբռնումները (մասնավորապես չորս տարրերի ուսմունքի վերաբերյալ) կաբելի է որակել որպես շափավոր ավանդական: Նա ևս գտնում է, որ երկրի վրա գոյություն ունեցող խիստ բազմազան էակներն ու մարմիններն արդյունք են չորս տարրերի բազմապիսի միացումների. «...զի ի չորից նիւթից ասի գոյացեալ»¹⁵, Չորս տարրերի ուսմունքով են պայմանավորված նաև Հ. Սեբաստացու սաղմնաբանական պատկերացումները՝ արական սկզբին վերագրելով երկու տարրերի (հրի և օդի) հատկանիշները, իսկ իգական սկզբին՝ մյուս տարրերի (ջրի և հողի) որակական հատկանիշները: Նա պտղի սաղմնավորումը պայմանավորում է արգանդում այդ չորս տարրերի միացումով. «Յաղագս բնութեան մարդկան թէ որպէս արարչագործեցան յարարչէն իւրեանց, վասն զի ի չորից նիւթոց ասի գոյացեալ մարդ. հող և ջուր և հով և հուր, իսկ Բ (2) տարրք տարողք են հուր և օգ այրական, իսկ Բ (2) կրողք են ջուր և երկիր իգական, զի ջրոյ խոնաւութիւն առանց ջերմութեան ամուլ է, իսկ ընդ միմեանց խառն արբեալ պտղաբերեն»¹⁶, Սաղմնաբանական այս պատկերացումները, անկասկած, իրենց հիմքում ունեն սաղմի առաջացման Հիպոկրատ-էպիկուրյան տեսությունը, որի համաձայն բեղմնավորումը տեղի է ունենում, երբ արգանդում միանում են արական և իգական սեռական բջիջները: Սա տարբերվում է արիստոտելյան այն տեսակետից, ըստ որի սաղմն արգանդում գոյանում է միայն արական սկզբի (բջիջի) միջոցով:

Սաղմի ֆիզիոլոգիայի վերաբերյալ Հ. Սեբաստացու և միջնադարյան հայ բնագետների պատկերացումները հենվել են Հիպոկրատ-էպիկուրյան տեսության վրա թերևս այն պատճառով, որ նրանց համար կողմնորոշիչ դեր են կատարել հունա-հռոմեական կլասիկ բժշկագետներ Հիպոկրատի, Գալենի, Նեմեսիոսի, Նյուսացու և ուրիշների աշխատությունները, որոնց նրանք ծանոթ են եղել ոչ միայն թարգմանությունների, այլև բնօրինակների միջոցով:

Ի դեպ, սաղմնաբանության ֆիզիոլոգիայի վերաբերյալ հայերեն ձեռագրեր

¹⁴ Հայտնի է, որ չորս տարրերի ուսմունքը որպես բնության մեջ գոյություն ունեցող նյութական մարմինների՝ այդ թվում և մարդու օրգանիզմի աղբյուր, սկզբնավորվել է հին Հնդկաստանում: Ըստ այդ տեսության, բնության յուրաքանչյուր գոյի հիմքում ընկած է 4 հիմնական տարր (կրակ, ջուր, օդ, հող) և դրանց այն որակական հատկանիշները (խոնավություն, ցրտություն, ցամաքություն, ջերմություն), որոնց տարբեր միացությունների արդյունքն է բնության յուրաքանչյուր բազմակերպություն: Մ. թ. ա. VII—V դդ. հնդիկ բժիշկ-փիլիսոփա Սուշրատան այդ չորս տարրերին ավելացրեց հինգերորդը՝ եթերը (տե՛ս Л. Оганесян, История медицины в Армении, ч. I, Ереван, 1946, с. 89—90).

¹⁵ Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 91բ:

¹⁶ Նույն տեղում:

գիր աղբյուրներում արժարժովել է նաև ինքնածնության գաղափարը¹⁷, որը բժշկագիտության մեջ հարատևել է մինչև XIX դ. կեսերը՝ ունենալով զգալի թվով կողմնակիցներ:

Չափազանց ուշագրավ են Հ. Սեբաստացու պատկերացումները սաղմի ներարգանդային աճի ու զարգացման ընթացքի վերաբերյալ: Ուշագրավ այն առումով, որ նա կարևոր նշանակություն է տալիս ժառանգականության գործոնին. «Իսկ ստրղծու մանկանն ըստ բնութեան հօրն, գոյանայ մանուկն, թէ մաղձոտ լինի և կամ այլ ինչ աղտ ցաւոց ունենայ ըստ այնմ գոյացութեան առնու խառնուածքն. վասն այնորիկ պարտ է առն և կենջն զծամաճակն առողջութեան ըմբռել. զի առողջ լիցի մանուկն որպէս մշակ, որ ընտրեն զժամանակ սերմանելոյն. զի թէ ցամաք լինի երկիրն և կամ տղմուտ և գէճ ոչ տայ պտուղ...»¹⁸:

Ըստ Հ. Սեբաստացու, պտղի նորմալ աճի ու զարգացման համար մեծ նշանակություն ունեն հղի կնոջ աշխատանքի բնույթն ու սննդի հիգիենան. «...այլ յորժամ տնկի մանուկն յորովայն մաւրն պորտն առնու զկերակուրն որպէս սեխ և դգում, վասն որոյ պարտ է կնոջն մինչ մանուկն յարգանտն կայ ի վնաս կերակրոց Կատրաստ կենալ, ի դիժար բանէ, զի մատաղ մանուկն որպէս մատաղ տունկ է, դիրաւ սղալի ի ցրտոյ կամ ի տօթոյ կամ անհալ կերակրոց և դիպուածոյ և ի լուծման դեղ տալոյ և տաք և չոր լինի»¹⁹: Սաղմի բեղմնավորման և պտղի ներարգանդային աճի ու զարգացման վերաբերյալ այս ռացիոնալ տեսակետի հետ մեկտեղ Հ. Սեբաստացու երկում առկա են նաև սխոլաստիկ պատկերացումներ: Դա մասնավորապես վերաբերում է 12 կենդանակերպերի ու մոլորակների՝ պտղի ներարգանդային զարգացման վրա ունեցած ազդեցության մասին նրա պատկերացումներին:

Սաղմնաբանությանը հետևում է բժշկարանի մարդակազմության ու բնախոսության բաժինը: Այն հիմնականում համընկնում է Ամիրզովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գործի համապատասխան բաժիններին: Բժշկարանի այս հատվածի ուսումնասիրությունը հուշում է, որ Հ. Սեբաստացին, ամենայն հավանականությամբ, ծանոթ է եղել նաև մինչև XVI դ. հայերեն գրված այլ կազմախոսական գործերի: Այս բաժինը սկսվում է համառոտ առաջաբանով, որտեղ հեղահյուսթային թեորիայի տեսանկյունից մեկնաբանվում են օրգանիզմի նորմալ կենսաբանական պրոցեսները: Ըստ Հ. Սեբաստացու, բնության չորս տարրերին և չորս տեսակի ջրերին (աղի, լեղի, հոտած և անուշ) համապատասխան մարդու օրգանիզմում կան չորս հյուսթեր (արյուն, լորձ, սև և դեղին լեղի) և չորս տեսակի հեղուկներ (թերևս սեկրետներ՝ արցունք, թուք և սերմնահյուսթ), որոնց գոյությունը օրգանիզմում նա

17 XIII դ. հայ բժշկապետ Գրիգորիսը, խոսելով քոսի ակտաճնության մասին, այն միտքն է հայտնում, որ անիծն ու ոչիլը առաջանում են ինքնածնության ճանապարհով, երբ մարդը խախտում է իր անձնական հիգիենան, մարմնի կեղտը՝ խառնվելով նրա գոլորշիների հետ, առաջացնում է անիծ և ոչիլ: Կամ էլ՝ դրանք առաջանում են հաստ մաղձից, երբ մաշկի ծակոտիները փակելու պատճառով այն մարմնից դուրս չի գալիս և մնում է մաշկի տակ (Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Կծոյանի, Երևան, 1962, էջ 39):

18 Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 95ա:

19 Նույն տեղում, էջ 95բ:

բացատրում է նպատակաբանական (թելեոլոգիական) սկզբունքով: Մարդկային կյանքի տարբեր շրջանները ևս չ. Սեբաստացին պայմանավորում է բնության մեջ կատարվող պարբերական փոփոխություններով:

Առաջաբանից հետո, քանակական տվյալներ հաղորդելով մարդու ոսկրերի, անոթների և ներվերի թվի մասին, հեղինակն անցնում է ներքին օրգանների կազմախոսությանն ու բնախոսությանը: Ապա «Վասն, որ յիշենք զՆ (5) սգայութիւնքն մարդոյն» վերնագրով գլխում անդրադառնում է հինգ զգայարանների բնախոսությանը: Ըստ Չ. Սեբաստացու, մարդու կմախքի ոսկրերի թիվը 365 է (Աբուսայիդի և Ամիրդովլաթի կարծիքով՝ 248), իսկ գանգատուփը կազմված է 7 ոսկրերից (ըստ Ամիրդովլաթի՝ 6)²⁰: Այնուհետև հեղինակը թվական տվյալներ է հաղորդում օրգանիզմի մեծ ու փոքր անոթների (365) և մեծ ու փոքր ջղերի՝ նյարդերի (452) մասին: Բժշկարանը գրեթե ճշգրիտ տեղեկություններ է պարունակում մարդու մարմնում եղած արյան քանակի և յուրաքանչյուր կաթիլի քանակի մասին. «ԾՃՂ (570) կաթ արիւն է մարդուս և ամէն կաթ Ա (1). մսխալ է»²¹:

Չ. Սեբաստացին մարդու ներքին օրգանների անատոմիական նկարագրությունը սկսում է գլխուղեղից, այն համարելով գլխավոր օրգան՝ սրտից հետո. «... որ է ինքն թագաւոր ամբողջ անձին», երկրորդ կարևոր օրգանը՝ շրջողը, որ վեզիր է այն թագաւորին»²²: Նրան հայտնի են ուղեղը ծածկող երկու (կարծր և փափուկ) թաղանթները, որոնք ուղեղը պահպանում են արտաքին վնասվածքներից: Ընդ որում, թաղանթներից առաջինն ամուր կպած է գանգոսկրին և ավելի կարծր է, քան երկրորդը, որն ավելի նուրբ է, փափուկ՝ անմիջապես կպած ուղեղին: Չ. Սեբաստացին նկարագրում է նաև գլխուղեղի երեք փորոքները, նշելով, որ դրանք իրար հետ ամուր միացած են «պօտունի տմաղի» միջոցով, որի մեջ կան «կարմիր երկնի» (գլխուղեղում գոյություն ունեցող զարկերակները). «Ինքն (գլխուղեղը—Գ. Կ.) երեք բաժին է և այն որ պօտունի տմաղ ասեն և այն ամէն բաժինն յիրար կիպ է և այն պտուտունիսին կարմիր երկնի կայ»²³: Անտիկ և միջնադարյան բնագետների նման Չ. Սեբաստացին ևս գլխուղեղում տարբերում է երեք փորոք, որոնցից առաջինում՝ ամենամեծում տեղավորված է տեսողության կենտրոնը՝ «...ինքն հիմն է և տուն է տեսողութեան, և աչացն լուսաւորութիւնն և մթնալն ի յայն փորոքնուն է»²⁴, միջին փորոքում՝ խելքը. եթե ուղեղի այս հատվածը վնասվի «...մարդն սահր (թուլամտութուն) և սաքթա (կաթված) լինի»²⁵: Երրորդ ամենափոքր բաժնում, կենտրոնացված է հիշողությունը, որի վնասվելուց մարդ դառնում է մոռացկոտ և «զինչ որ ուսնի յուշ միտքն ձգէ»²⁶:

20 «...ամէնիմաստն ստեղծեաց զլօգուած մարդոյն Մե՛Ը (248) ոսկր ի շար ժողովեաց ի միասին» (Աբուսայիդ, Ցաղազս կազմութեան մարդոյն, աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 145): Իսկ Ամիրդովլաթը գրում է. «Գիտացիր, որ մարդն ԲՃԽԸ (248) ոսկր ունի» (Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, աշխատասիրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 42):

21 Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 97ա:

22 Նույն տեղում, էջ 99բ:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում, էջ 100ա:

25 Նույն տեղում, էջ 100բ:

26 Նույն տեղում:

Միջնադարյան հայ հեղինակների պատկերացումները գլխուղեղի կազմախոսության և բնախոսության վերաբերյալ գրեթե նույնությամբ համընկնում են գալենյան անատոմիային ու ֆիզիոլոգիային, որը բժշկագիտության մեջ գրեթե անփոփոխ մնաց մինչև XVII դ.:

Գլխուղեղի նկարագրությունից հետո, Հ. Սեբաստացին անցնում է սրտի կազմախոսությանը՝ այն համարելով օրգանիզմի կենսունակության և ջերմության աղբյուր: Միջնադարյան հայերեն բժշկարաններում տեղ գտած սրտի նկարագրությունները վկայում են, որ Հայաստանում անատոմիան զարգացել է՝ պայմանավորվելով դիաֆրամիան դիտարկումներով: Այսպես, եթե Կ. Գալենը գտնում էր, որ սիրտը բաժանված է երկու կեսի և տեղադրված է կրծքավանդակի կենտրոնում²⁷, ապա միջնադարի հայ բնագետները, այդ թվում և Հ. Սեբաստացին, նշում են, որ այն գտնվում է կրծքավանդակի ստորին ձախ կեսում և բաժանվում է չորս կեսի՝ երկու փորի և երկու ականջի (խոսքը, ամենայն հավանականությամբ, սրտի աջ և ձախ փորոքների և նախասրտերի մասին է)։ «Եւ իր (սրտի) տեղն ի կրծոց ի ներքնն ի ձախ դին է: ...Եւ հանց գիտացիր, որ սիրտն երկու փոր ունի և երկու ականջ՝ Ա (1)։ աջիկ դիհն է, և Ա (1)։ ի ձախն: Եւ այն փորն, որ յաջ դին է՝ ինքն Բ (2)։ ծակ ունի ի յայն երակնէն, որ զարիւնն ի լերդին ի սիրտն կուղարկէ (պետք է ենթադրել, որ խոսքը վերին և ստորին սիներակների մասին է) և Ա (1)։ այն է, որ սրտէն ի թոքն կերակուր կուղարկէ:

Եւ այն փորն, որ ի ձախ դին է և այն այլ Բ (2)։ ճանապարհ սնի՝ Ա (մեկ)։ վասն օդոց համար, Ա (1), որի թոքն քամի հասցնի (հավանաբար՝ v. pulmonalis) և Ա (1) այլն այն է, որ ան մեծ երակին (հավանաբար՝ aorta) համար է, որ շիրեանին երակն յիրմէն կելնէ, և զամէն անձն կու տաքցնէ»²⁸:

Ի տարբերություն գալենյան մարդակազմության, որտեղ սիրտը նկարագրվում է որպես ոչ մկանային օրգան²⁹, Հ. Սեբաստացին այն ներկայացնում է որպես մկանային մի օրգան՝ տեղադրված հատուկ պարկի մեջ (սրտակրանքի), որպեսզի չվնասվի։ «Եւ ինքն ամուր միս է և յայնմ յամանի մէջ է ամուր, որ պահէ զինքն յամէն շարէ»³⁰: Նա խոսում է նաև սրտակրանքի մեջ առկա շճային հեղուկի մասին, որը դյուրացնում է սրտի աշխատանքը։ «Եւ հանց գէտ փրփուր իրք ումի մէջն է և սիրտն այն կու դպլի»³¹: Այս ամենը վկայում են, որ մեր հեղինակը բավական ճիշտ պատկերացում է ունեցել սրտի կազմախոսության մասին:

Բժշկարանի «Վասն ըստեղծման լերդին» գլխում Հ. Սեբաստացին համեմատաբար սեղմ ներկայացնում է լյարդի կազմախոսությունն ու բնախոսությունը: Լյարդի դերը օրգանիզմում մեկնաբանելով համորալ պաթոլոգիայի տեսանկյունից, Հ. Սեբաստացին դրան վերագրում է կերակրանյութերից արյունաստեղծման և արյունը օրգանիզմի տարբեր մասերը անհրաժեշտ քանակությամբ տեղաբաշխելու գործառություն։ «Եւ կերակուր և ըմպե-

27 К. Гален, О назначении частей человеческого тела, М., 1971, с. 227.

28 Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 100բ—101ա:

29 К. Гален, նշվ. աշխ., էջ 229:

30 Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 100բ:

31 Նույն տեղում:

լի, որ մէջն ի ստամոքին կիսաեփ լինի և լերդին երակներն զուծն ի յինքն քաշեն և լերդն արիւն դարձուցանէ և զայն արիւնն բաժանէ յանձն, որ պէտանէիր»³², Հ. Սեբաստացին գտնում է, որ լեղի արտադրող այս օրգանն ունի երկու բերան, որոնցից մեկով լեղին լյարդից իրեն է քաշում, իսկ մյուսով՝ լեղին լեղապարկից գնում է դեպի ստամոքս:

«Վասն ստեղծման փածղանըն» գլխում Հ. Սեբաստացին ճշգրտորեն նկարագրում է փայծաղի տեղագրական անատոմիան: Ինչ վերաբերում է փայծաղի՝ օրգանիզմում ունեցած դերին ու նշանակությանը, ապա նա, դարձյալ հիմք ընդունելով հեղահյութային պաթոլոգիայի թեզը, գտնում է, որ փայծաղը ստեղծված է արյունը մաքրելու և առհասարակ մարմնի մեջ առաջացած «ամէն աղբ» իր մեջ կուտակելու համար, այլ կերպ ասած՝ կատարում է ֆիլտրի դեր: Փայծաղի այսօրինակ բնախոսական գործառությունը, ըստ Կ. Գալենի, օրգանիզմում իրագործվում է նրա սպունգանման կառուցվածքի շնորհիվ³³: Նույն տեսակետին է նաև Հ. Սեբաստացին:

Աշխատության «Վասն ստեղծման թոքին» գլխում, գրեթե շանդրադառնալով թոքի անատոմիական կառուցվածքին, Հ. Սեբաստացին անցնում է շնչական այդ օրգանի բնախոսական գործառության նկարագրությանը: Այստեղ նույնպես նրա ելակետը հեղահյութային պաթոլոգիան է. ի տարբերություն սրտի, թոքն օժտված է «հոլ և գէճ» բնությամբ, որպեսզի սառեցնի սրտից արտադրվող տաք գոլորշին և, միաժամանակ, սրտին մատակարարի սառը օդ, որ այն չվնասվի իր իսկ արտադրած տաք գոլորշու մրուրից. «...ի ժիր զհոլ քամին ի խոչակն ի վար քաշէ վասն տաքութեան սրտին համար, որ սրտին տաքութիւնն անձին զէն շտոնէ»³⁴: Շնչական օրգանի ֆիզիոլոգիական գործառությունը Հ. Սեբաստացու մեկնությամբ պայմանավորված է թոքի կառուցվածքով և իրագործվում է միմյանց հակառակ այն երկու շարժումների շնորհիվ, որ արաբական բժշկության մեջ անվանվում է «հէրէքէթի ինպիսաթ»՝ ներշնչման փուլ և «հէրէքէթի նըղպազ»՝ արտաշնչման փուլ. «...և ինքն (թոքը—Դ. Կ.) երկու շարժում ունի, մէկ մէկի հակառակ: Եւ գիտացիր, որ հեքիմն ամէն շարժման անուն մի ասեն, մէկին հէրէքէթի (ի) նպիսաթ և մէկին հէրէքէթի նըղպազ: ...Եւ գիտացիր, որ արարիչն Աստուած զթոքին միսն կակուղ և թեթև միս է արեւ և մէջն փունձա»³⁵,

ի տարբերություն մարսողական տրակտի այլ օրգանների (լյարդի, փայծաղի, լեղապարկի), բժշկարանի հեղինակը բավական հանգամանորեն և ճիշտ է ներկայացնում ստամոքսի տեղագրական անատոմիան՝ կրճբավանդակից ներքև, վերին հատվածը թեքված դեպի ձախ, իսկ վարինը՝ դեպի աջ: Նկարագրելով այն երկու կապանները, որոնք ստամոքսը կապում են լյարդին ու փայծաղին՝ որովայնի խոռոչում անշարժ պահելով ստամոքսը, նա նշում է ստամոքսը շրջապատող օրգանների մեկ այլ՝ կերակրանյութերի մարսմանը նպաստելու դերը. «Գիտացիր, որ ստամոքին բնական տեղն ի կրծոց ներքևն է, բայց վերին դիհն քիչ մի ձախ դիհն է և ներքի դիհն ի յաջն մոտ է,

32 Նույն տեղում, էջ 101բ:

33 К. Гален, Եղվ. աշխ., էջ 185:

34 Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 102բ:

35 Նույն տեղում:

և սիրտն և լերդն և փայծաղն ի նորա բուլորն է: Որպէս, որ լերդն ի յաշն է և փայծոնն ի ձախն, և ներքեն ամուր միս կայ և վերեն նօսր միս կայ»³⁶:

Ի դեպ, նա քաղցի ֆիզիոլոգիայի մեջ առանձնացնում է ստամոքսի բերանի հատվածի նշանակությունը. «Եւ ինքն կոհար է փուճ-փուճ, անոր համար է, որ այլ տեղաց ուժ առնու կերակուր ուտելու համար և խիստ ուժ ստամոքին բերանն է և այս է զօրութիւն, որ քաղցեցն է զմարդն»³⁷: Այստեղ կրկին առկա է նրա առնչումը գալենյան ֆիզիոլոգիային³⁸: Այնուհետև Հ. Սերաստացին անդրադառնում է ստամոքսի շորս բնախոսական գործառութիւններին՝ քարշողական, բռնողական, եփողական և վանողական գործողութիւններին: Նշենք, որ մեր հեղինակին հայտնի է ստամոքսապատի կառուցվածքը՝ նրա երեք հյուսվածաբանական շերտերը (շճաթաղանթային, լորձաթաղանթային և մկանային):

Անցնելով աղիների կազմախոսությունը, Հ. Սերաստացին սկզբից ևեթ նշում է դրանց ընդհանուր թիվը՝ վեց (երեքը՝ բարակ և երեքը՝ հաստ) և ավելացնում, որ աղիների կառուցվածքն էլ նույնն է, ինչ որ ստամոքսինը (խոսքը աղիների պատի անատոմիական կառուցվածքի մասին է), ուստի դրանք երկուսն էլ կատարում են նույն բնախոսական գործառութիւնը. «Գիտացիր, որ աղեցն կազմելիքն որպէս ստամոքին է և ամէնն վեց աղիք են՝ երեք վերինն բարակ է և պինտ է, և երեք ներքինն հաստ և թանձր է»³⁹:

Միզասեռական օրգանների կազմախոսությունն ու բնախոսությունը բժշկաբանում տրված է բավական սեղմ: Երիկամների ու միզապարկի տեղագրական նկարագիրը տրված է ըստ Ամիրզովլաթի, որի համար հիմք են ծառայել Իբն Սինայի «Կանոնի» համապատասխան բաժինները⁴⁰:

Բժշկարանի կազմախոսության բաժինն ավարտվում է զգայարանների բնախոսությանը նվիրված բավական ընդարձակ հատվածով: Այստեղ առանձնապես ուշադրավ է սվասն ստեղծման և յաւրինուածոց աշացն» գլուխը: Հայ բժշկական մատենագրության մեջ աչքի կառուցվածքին նվիրված ամենակատարյալ ուսումնասիրությունը, անկասկած, Մխիթար Հերացու մեզ շհասած կազմախոսական գործի «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աշացն» բաժինն է, որը սերաստահայ բժշկական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ Ասար Սերաստացին ներմուծել է Արուսաչիդի՝ իր խմբագրած «Մարդակազմութիւն» մեջ: Աչքի կազմախոսությանը նվիրված Մխիթար Հերացու վերոհիշյալ հատվածը սկզբնաղբյուր է հանդիսացել նաև Ամիրզովլաթ Ամասիացու համար⁴¹: Իսկ Հ. Սերաստացու մեկնաբանումները հիմնականում համընկնում են Ամիրզովլաթի մեկնաբանումներին, կրելով, թերևս, Հերացու գործից եկող գիտական լիարժեքության հատկանիշը: Տեսողական օրգանից բացի, այս բաժնում

³⁶ Նույն տեղում, էջ 106ա:

³⁷ Նույն տեղում:

³⁸ К. Гален, նշվ. աշխ., էջ 169:

³⁹ Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 106ա:

⁴⁰ Այդ համոզմանը եկանք, երբ համեմատեցինք Իբն Սինայի «Կանոնի» և Ամիրզովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» գործի «Կերպ ստեղծման երիկամացն» և «Կերպ ստեղծման հայաբարձին» գլուխները (տե՛ս Ибн Сина, Канон врачебной науки, ч. III, Ташкент, 1980, с. 269, 305, Ամիրզովլաթ Ամասիացու, նշվ. աշխ., էջ 34, 37):

⁴¹ Աբուսալիդ, նշվ. աշխ., էջ 24:

խոսվում է նաև մյուս շորս զգայարանների՝ հոտառության, ճաշակելիքի, շոշափելիքի և լսողության բնախոսական գործառությունների մասին, ուր առավելագույն զգալի է նեմեսիոս Եմեսացու «Ցաղագս բնութեան մարդոյ» գործի ազդեցությունը⁴²:

Ուշագրավ է Հ. Սերաստացու հետևությունն այն մասին, որ մարդու կատարելությունը պայմանավորված է հինգ զգայարաններով, որոնք կենսարանորեն կապված են միմյանց. «Գիտացիր, որ տէր Աստուած ի մարդն Ե (5). սգայութիւնք է ստեղծէր և մարդուն կատարելութիւնք Ե (5). սգայարանօքն է... Ե. Աստուած յիր ողորմութենէն է ստեղծէր զամէնն, ամէն մէկ ի տեղ է դրէր և յորժամ այս Ե (5). սգայարանացն որ մէկ պակաս լինի. նա մէկ այլ պակաս չի լինիր, հանց որ հոտն քիթ կառնու և աչքն շառնու և ձայնն ականջըն լսէ և քիթն շրսէ և այլն այսպէս է»⁴³: Զգայարանների բնախոսությանը նվիրված բաժնով էլ ավարտվում է բժշկարանը: Ինչ վերաբերում է այս աշխատության դեղագիտության բաժնին, ապա դա մի առանձին ուսումնասիրության նյութ է:

Հովասափ Սերաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» ստեղծագործության քննությունը համոզում է, որ հայ բնագետի բժշկական հայացքները հիմնված են հույն անախիլ բնափիլիսոփաների և հայ բժշկական դպրոցի լավագույն ներկայացուցիչների թողած ժառանգության վրա, որոնց գրվածքների ստեղծագործական յուրացմամբ էլ նա ստեղծել է իր այս արժեքավոր բժշկագիտական գործը:

ТРУД ОВАСАПА СЕБАСТАЦИ ПО ЕСТЕСТВОЗНАНИЮ

ДОНАРА КАРАПЕТЯН

Резюме

На основании новых рукописных материалов Матенадарана им. Маштоца впервые вводится в научный оборот ценный естественнонаучный труд весьма известного в армянской филологии поэта-миниатюриста Овасапа Себастаци.

Основными первоисточниками его лечебника были творчески усвоенные им труды классиков античной медицины. В своей работе Овасап Себастаци обращается к учению о четырех элементах, которое лежало в основе средневекового естествознания, толкуя его с точки зрения античной науки и видных средневековых армянских естествоиспытателей.

Автор лечебника рассматривает на должном научном уровне вопросы эмбриологии, а также анатомии и физиологии внутренних органов. Отдельная глава лечебника посвящена физиологии пяти органов чувств.

Давая научную оценку труду армянского врача-ученого первой половины XVI в., можно с полным правом сказать, что Овасап Себастаци как естествоиспытатель занимает свое достойное место в средневековом армянском естествознании.

⁴² Ն Ն մ ե ո ի ո ս, Ցաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889, էջ 77—83:

⁴³ Մատենադարան, ձեռ. № 7049, էջ 114ր: